ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՍԵՐՆԴԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ «ԹԱՏԵՐԱԲԵՄՈՒՄ»

Պատերազմի գործիքակազմը ժամանակի ընթացքում պարբերաբար փոփոխվում է: Պատերազմ վարելու ավանդական տեսանկյունները գնալով վերաձևվում են: Պատերազմական սովորական տեխնիկային և ռազմավարությանը փոխարինման են գալիս պատերազմական նոր մարտավարություններ ու ժամանակակից գործիքներ, ինչպիսիք են տեղեկատվական պատերազմն ու լրատվական քարոզչությունը, անհամաչափ և հիբրիդային պատերազմները, որոնք վերացնում են մարտական և ոչ մարտական գծերը՝ լրացնելով այդ բացը:

Ալբերտ Նոֆի[1]

Հիմնաբառեր. *պատերազմի սերունդներ, գերժամանակակից տեխնոլոգիաներ, ռազմական բյուջե, ոչ կոնտակտային պատերազմ, տարածաշրջանային բախումներ*

Ժամանակակից աշխարհում պատերազմի «սերունդների» միմյանց հաջորդող սահմանագծերը հիմնականում համընկել են մարդկային հասարակության զարգացման որակական, պատմական նշանակության փոփոխությունների հետ, որոնք էլ պայմանավորել են խոցման՝ սկզբունքորեն նոր միջոցների ի հայտ գալը, պատերազմի վարման նոր ձևերի ու եղանակների զարգացումը: Ներկայիս փոփոխվող աշխարհակարգում, չնայած «չհայտարարված պատերազմներին», աշխարհի հզորները մեծացնում են ռազմական ծախսերը, վերազինում և ներդնում գերժամանակակից սպառազինություն, նախապատրաստվում հաջորդ սերնդի ոչ կոնտակտային (ոչ շփումային) պատերազմների: Ըստ սերնդային առանձնահատկությունների՝ պատերազմների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վաղուց արդեն անցյալում են մեզ ծանոթ մարտավարության տեսակները, դեմ առ դեմ մարտերը, և որ յուրաքանչյուր հաջորդ սերնդի պատերազմ հիմնվում է տեխնիկայի զարգացման, արհեստական բանականության կիրառման և հեռահար գերճշգրիտ խոցման համակարգերի վրա:

Հայաստանը, ցավոք, հայտնվեց հինգերորդ սերնդի պատերազմի «թատերաբեմում»՝ չունենալով այն անհրաժեշտ տնտեսական հենքը, որը թույլ կտար դիմակայել տարածաշրջանային բախումներին:

Մերի ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

2018 թ. ավարտել է ՀՊՏՀ-ն՝ «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մասնագիտությամբ և ընդունվել մագիստրատուրա: 2018 թվականից առայսօր Օրբելի վերլուծական կենտրոնի հետազոտող փորձագետ է:

2020 թ. ընդունվել է ՀՊՏՀ ասպիրանտուրա:

2019 թ. փոխանակման ծրագրի շրջանակներում սովորել է Պոզնանի տնտեսագիտական համալսարանում՝ «Միջազգային բիզնես» մասնագիտությամբ:

Ադրբեջանի սանձազերծած ռազմական գործողությունների հետևանքով սկսված պատերազմի թափն ու ռազմագիտական բաղադրիչներն ան-

[1] ALBERT A. NOFI, RECENT TRENDS IN THINKING ABOUT WARFARE, էջ 87, 2006 https://www.cna.org/CNA_files/PDF/D0014875.A1.pdf

նախադեպ էին: Փաստացի վարում էինք 5-րդ սերնդի պատերազմին բնորոշ գործողություններ: Այս մասին մեկ անգամ չէ, որ հայտարարվել է այդ օրերին, սակայն անհրաժեշտություն է առաջանում պարզաբանել՝ ինչ է իրենից ներկայացնում 5-րդ սերնդի պատերազմը, ինչով է տարբերվում մեզ ծանոթ պատերազմներից, և ինչ տնտեսական հիմք է անհրաժեշտ մարդկությանը վերջին սերնդի պատերազմ վարելու համար:

Հատկանշական է, որ ժամանակակից պատմության մեջ հայտնի է նաև «վեցերորդ սերնդի պատերազմ» հասկացությունը, որը շրջանառության մեջ են մտցրել ռուս և հայ ռազմական վերլուծաբաններն ու տեսաբանները: Հայ իրականության մեջ առաջին անգամ այս եզրույթին անդրադարձել է ռազմական պատմաբան, ռազմաքաղաքական վերլուծաբան, գնդապետ Մնացական Ռ. Խաչատրեանը[2], իսկ գեներալ Արկադի Տեր-Թադևոսյանը՝ «Կոմանդոսը»[3], զարգացնելով այդ տեսությունը, առաջ է քաշել նաև «յոթերորդ սերնդի պատերազմ» հասկացությունը: Ռուսաստանում «վեցերորդ սերնդի պատերազմ» հասկացությունը տեղ է գտել մի շարք ռազմական տեսաբանների, այդ թվում՝ գեներալ Սլիպչենկոյի, Վլադիմիր Վանտրոբանի, ծովակալ Կապիտանեցի աշխատություններում: Սակայն, մինչ անդրադառնալը պատերազմի նորագույն սերունդներին, հարկ է կատարել հակիրճ ռազմապատմական էքսկուրս: Դասակարգելով յուրաքանչյուր սերնդի պատերազմի ռազմավարությունն ու տեխնիկան և այդ դասակարգումների հիմքում տարբերակելով պայմանները, հանգամանքները և իրադարձությունները՝ հնարավոր է տեսնել, թե ինչ կարողություններ են մեզ անհրաժեշտ ներկայում և ապագայում: Մենք պետք է դասակարգենք նաև մեր հակառակորդ երկրներից յուրաքանչյուրին՝ ըստ մարտունակության և պատրաստվածության, հասկանալու համար, թե որ սերնդի պատերազմ են ունակ վարելու նրանք: Այսպիսով՝ Երկիր մոլորակի վրա երբևէ տեղի ունեցած բոլոր պատերազմները ընդունված է բաժանել երկու խմբի.

- առաջին 4 սերնդի պատերազմներ՝ գերակշռում է կենդանի ուժը, և առանցքային դեր է խաղում մարդկային գործոնը,
- 5-րդ, 6-րդ, 7-րդ սերնդի պատերազմներ՝ կիրառվում են գերճշգրիտ տեխնոլոգիաներ, հնարավորինս նվազեցվում է մարդկանց առճակատումը:

Յուրաքանչյուր պատերազմ, որպես բռնության ձև, ունի իր առանձնահատկությունները, կառուցվածքը, գործառույթները, տրամաբանությունը և իրեն բնորոշ գործիքակազմը[4]: Վաղնջական ժամանակներից մինչև XX դարը միմյանց հաջորդած պատերազմների առնվազն 4 սերունդ էր հայտնի, ընդ որում, դրանց՝ միմյանց հաջորդելու սահմանագծերը հիմնականում համընկնում են մարդկային հասարակության զարգացման որակական, պատմական նշանակություն ունեցող ցատկերի հետ, որոնք էլ պայմանավորել են խոցման սկզբունքորեն նոր միջոցների ի հայտ գալը: Վերջիններս էլ, իրենց հերթին, ձևավորել են պատերազմի վարման նոր եղանակներ: «4-րդ սերնդի պատերազմ» հասկացությունն առաջ են քաշել ԱՄՆ վերլուծաբանները, առաջին հերթին՝ Ուիլյամ Ս. Լինդը[5]՝ հիմնավորելով «պատերազմի փոփոխվող դեմքը»: Ծովային հետևակի կորպուսի պաշտոնաթող գնդապետ Թո-

[2] Մնացական Ռ. Խաչատրեան, «6-րդ սերնդի պատերազմներ», 2016, «ԱԶԳ» օրաթերթ, https://www.azg.am/AM/2016042916

[3] Արկադի Տեր-Թադևոսյան, Ռազմական փորձագետների կանխատեսումները՝ ապագայի պատերազմների վերաբերյալ, http://hayacq.am/2910/

[4] 1GW. Զանգվածային կենդանի ուժ ՝ պայքար դեմ առ դեմ, 2GW. Զանգվածային կրակային ուժ՝ երբ ֆիքսված ամրություններն առավելություն ունեն 1GW տեխնիկայի նկատմամբ, 3GW. Մանևրի պատերազմ, որտեղ տարածությունը փոխարինվում է ժամանակով ՝ չեզոքացնելով 2GW տեխնիկան, 4GW. Ապստամբություն և ահաբեկչություն. Ցածր ինտենսիվության ձգձգված պատերազմ, որը չեզոքացնում է 3GW տեխնիկան, 5GW. Ոչ կոնտակտային պատերազմ - ճշգրտորեն ղեկավարվող զենք, որն օգտագործվում է 4GW տեխնիկայի խոցման համար:

[5] William S. Lind, “Understanding Fourth Generation War”, 2004, https://original.antiwar.com/lind/2004/01/15/understanding-fourth-generation-war/

մաս Համսին[6] գրել է. «Ժամանակակից պատերազմների «առաջին սերնդի» ժամանակ գերակշռում էր զանգվածային կենդանի ուժը, և դա եզրափակվեց Նապոլեոնի արշավանքներով: «Երկրորդ սերնդում», որն արագորեն ընդունվեց աշխարհի խոշոր տերությունների կողմից, գերակշռում էր կրակի ուժը. այն ավարտվեց Առաջին համաշխարհային պատերազմով: Համեմատաբար ավելի կարճ ժամանակահատվածում՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում, գերմանացիները ներմուծեցին «երրորդ սերնդի պատերազմ» հասկացությունը, որը բնութագրվում է մանևրով, ավելի տարածված է որպես Բլիցկրիգ (կայծակնային պատերազմ): Իսկ «չորրորդ սերնդի պատերազմները» զարգացել են՝ հիմնվելով Երկրորդ համաշխարհային պատերազմից ի վեր քաղաքական, սոցիալական, տնտեսական և տեխնիկական փոփոխությունների վրա: 4-րդ սերունդը ներառում է ցածր ինտենսիվության ձգձգված մարտեր, ինչպես նաև ահաբեկչության կիրառման բաղադրիչ»: Համսին մատնանշում է նաև 5-րդ սերնդի՝ կիբեռպատերազմի մասին, որը ոչնչացնում է երկրի տնտեսությունը՝ դրանով իսկ վերացնելով պատերազմ սկսելու շարժառիթներն ու արդյունաբերական կարողությունները:

5-րդ սերնդի պատերազմը, թերևս, հայտնի էր միայն գրական ակնարկներից և ռազմական փորձագետների կանխատեսումներից, այնինչ, ցավով պետք է արձանագրել, որ դրան բնորոշ որոշակի գործիքակազմ, ռազմավարություն ու հատկանիշներ գործնական կիրառություն ստացան Արցախի Հանրապետությունում տեղի ունեցած պատերազմում:

Ռուս և հայ վերլուծաբանների՝ պատերազմների դասակարգման սկզբունքների վերաբերյալ մոտեցումներն էականորեն տարբերվում են ամերիկացի ռազմագետների տեսակետներից: «6-րդ սերնդի պատերազմ» հասկացությունը ռուսական ռազմագիտության մեջ հայտնվել է 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին: Սլիպչենկոն դա անվանում է «ոչ կոնտակտային (առանց շփման) պատերազմ» (non-contact warfare): Եթե առաջին չորս սերնդի պատերազմները ենթադրում էին մարտեր՝ կենդանի ուժի անմիջական մասնակցությամբ, ապա վերջին սերնդինը՝ գերճշգրիտ զինտեխնիկայի օգտագործում, մարդկային ուժի ուղիղ առճակատման բացառում կամ նվազագույն կիրառում[7]: Հենց սա է պատճառը, որ այս դեպքում գործնականում այնպիսի ավանդական հասկացություններ, ինչպիսիք են «ռազմաճակատի գիծը», «զորքերի շարակարգը», «թիկունքը» և կոնտակտային կամ շփումային պատերազմի այլ հատկանշական երևույթները, ըստ էության, կորցնում են իրենց նշանակությունը: Ըստ Մնացական Ռ. Խաչատրեանի՝ նոր սերնդի պատերազմ վարելու համար կարևորվում է հասարակության տնտեսական զարգացման մակարդակը,[8] և նման պատերազմները բնորոշ են լինելու 21-րդ դարին: *«Որևէ սերնդի պատերազմ պետք է դիտարկել որպես բարդ հասարակական-քաղաքական երևույթ, որն ընդգրկում է պետությունների և հասարակական-քաղաքական համակարգերի միջև պայքարի զանազան տեսակների ամբողջությունը. այդ թվում՝ քաղաքական, դիվանագիտական, գաղափարախոսական, տնտեսական, ռազմական, տեղեկատվական, բնապահպանական և այլն»*,- գրում է նա[9]: Տեղեկատվական պայքարը գրեթե միշտ ուղեկցում է բոլոր պատերազմներին, սակայն 6-րդ սերնդի պատերազմի դեպքում, երբ կիրառվում են բարձր ճշգրտության զենքեր, դա վճռորոշ նշանակություն է ձեռք բերում: Օգտագործվում են այս ոլորտի պայքարի տարբեր ձևեր՝ սկսած ապատեղեկատվության (fake news) մեծ

[6] Thomas X. Hammes, "4GW: Our Enemies Play to Their Strengths," Armed Forces Journal, 2004, էջ 40-41. Տես նաև՝ Thomas X. Hammes, The Sling and the Stone: On War in the 21st Century (St. Paul, WI.: Zenith Press, 2004); Thomas X. Hammes, "Insurgency: Modern Warfare Evolves into a Fourth Generation," Strategic Forum, 214, 2005, http://www.ndu.edu/inss/strforum/SF214/SF214.pdf

[7] Warfare Evolution Blog: Next generation warfare part 2, Ray Alderman, 2014 https://militaryembedded.com/radar-ew/signal-processing/warfare-evolution-blog-next-generation-warfare-part-2

[4] «ԱԶԳ» օրաթերթ, «6-րդ սերնդի պատերազմներ», 2016, https://www.azg.am/AM/2016042916

[9] Նույն տեղում:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Ռազմական ծախսերով աշխարհի առաջատար 18 երկրներն ըստ SIPRI-ի տվյալների (ռազմական ծախսեր/ՀՆԱ, %)

հոսքերի տարածումից, վերջացրած պատերազմի ընթացքի վերաբերյալ օպերատիվ տվյալների առկայությամբ և հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացմամբ:

Այսօր աշխարհի տարբեր տարածաշրջանների երկրներում ռազմական ծախսերի կտրուկ ավելացումը վկայում է «չհայտարարված պատերազմների» առկայության մասին: Վերջին տասնամյակում համաշխարհային ռազմական ծախսերը կայուն կերպով նվազել են միայն ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո՝ 2011-2014 թթ., իսկ 2015 թ.-ից ի վեր դրանք սկսել են աճել:

Ստոկհոլմի միջազգային խաղաղության հետազոտության ինստիտուտի (Stockholm International Peace Research Institute SIPRI)[10] տվյալներով՝ 2019 թ. աշխարհում ռազմական ծախսերը կազմել են 1,917 տրլն ԱՄՆ դոլար, ինչը 1988 թ.-ից ի վեր ամենաբարձր ցուցանիշն է: Ընդհանուր առմամբ, 2019 թ., 2018 թ. համեմատ, աշխարհում ռազմական ծախսերն ավելացել են 3,6%-ով, իսկ 2010 թ. համեմատ՝ 7,2%-ով:

Գծապատկեր 1-ում ներկայացված են ռազմական ծախսերի գծով աշխարհի 18 առաջատար երկրներ, որոնց կազմը եզրափակում են տարածաշրջանային երկրներից Թուրքիան և Իրանը:

Ըստ մասնագետների՝ 2019 թ. աշխարհում ռազմական ծախսերը կազմել են համաշխարհային ՀՆԱ 2,2%-ը, իսկ հինգ ամենախոշոր ծախսողներն էին ԱՄՆ-ը, Չինաստանը, Հնդկաստանը, Ռուսաստանը և Սաուդյան Արաբիան, որոնց ծախսերը միասին համաշխարհային ռազմական ծախսերի 62%-ն էին (գծապատկեր 2):

Ըստ SIPRI-ի տվյալների՝ 4,0% կամ ավելի ռազմական բեռ ունեցող 10 երկրից 6-ը Մերձավոր Արևելքում է: Հատկանշական է, որ Օմանն իր ՀՆԱ-ի 8,8%-ը ծախսել է նշված ոլորտում (աշխարհում ամենաբարձր մակարդակը), Սաուդյան Արաբիան՝ 8,0%-ը, Քուվեյթը՝ 5,6%-ը, Իսրայելը՝ 5,3%-ը, Հորդանանը՝ 4,7%-ը, Լիբանանը՝ 4,2%-ը, Ալժիրը՝ 6,0%-ը, Հայաստանը՝ 4.9%-ը, Ադրբեջանը՝ 4,0%-ը և Պակիստանը՝ 4,0%-ը:

Ինչպես տեսնում ենք, Հայաստանը նույնպես ներառված է այս երկրների ցանկում՝ 4,9% ցուցանիշով հայտնվելով 6-րդ

[10] SIPRI Fact Sheets, TRENDS IN WORLD MILITARY EXPENDITURE, 2019, https://www.sipri.org/sites/default/files/2020-04/fs_2020_04_milex_0.pdf



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Առաջատար երկրների մասնաբաժինը համաշխարհային ռազմական ծախսերում, 2019 թ. (%)

տեղում, մինչդեռ Ադրբեջանը՝ 4% ցուցանիշով, 9-րդում է:

Աշխարհի առաջատար երկրների տվյալներն այս առումով որքան էլ որ տպավորիչ լինեն, այդուհանդերձ, էլ ավելի են ընդգծում ՀՀ՝ որպես հակամարտության մեջ գտնվող երկրի թույլ կողմերը: Մասնավորապես՝ թեև Հայաստանի ռազմական ծախսերը շարունակաբար աճել են, իսկ վերջին 2 տարիներին հատել 300 մլրդ դրամի սահմանը, դրանք անհամեմատելի են վերոնշյալ երկրների ցուցանիշների հետ: ՀՀ 2020 թ. պետական բյուջեով պաշտպանության ոլորտին տրամադրվել է մոտ 307.2 մլրդ ՀՀ դրամ, իսկ 2021 թ. բյուջեի նախագծով ծրագրվել է հատկացնել 311.6 մլրդ ՀՀ դրամ (գծապատկեր 3): Նշենք, որ Հայաստանի տարածաշրջանային հակառակորդ Ադրբեջանի ռազմական բյուջեն 2019 թ. կազմել է 1 մլրդ 787 մլն ԱՄՆ դոլար, որից 812 մլն ԱՄՆ դոլարը հատկացվել է միայն հատուկ պաշտպանական նշանակության նախագծերի և միջոցառումների իրականացմանը:

Ընթացիկ տարվա սեպտեմբերի 27-ին Արցախի դեմ սանձազերծված թուրք-ադրբեջանական պատերազմն ապացուցեց, որ վերջին սերնդի պատերազմ վարելու համար, նախևառաջ, անհրաժեշտ է ունենալ զարգացած, հզոր տնտեսություն, կայացած ինստիտուտներ, ժամանակակից, նորարարական և գերճշգրիտ սպառազինություն և, իհարկե, որևէ ուղղությամբ բացարձակ գերակայություն: Հասարակության մեջ կոտրվեց այն կարծրատիպը, որ «փափուկ ուժի» (Soft power) լծակները և միջազգային հանրության ջանքերը բավարար են պատերազմող իրավիճակում գտնվող երկրին հակամարտության մեջ շահեկան դիրք գրավելու համար՝ առանց գերհզոր «կոշտ ուժի» (Hard power)՝ առկայության (ռազմական համալրվածություն, ռազմական հզոր ներուժ ու մարտունակ բանակ):

Միաժամանակ, պատերազմների ուսումնասիրությունն ըստ դրանց սերնդային առանձնահատկությունների ցույց տվեց, որ արդեն անցյալում են մեզ ծանոթ մարտավարության տեսակները, դեմ առ դեմ մարտերը, և որ յուրաքանչյուր հաջորդ սերնդի պատերազմ հիմնվում է նորարարական տեխնիկայի ու արհեստական բանականության, ինչպես նաև հեռահար խոցման համակարգերի կիրառման վրա:

Ամփոփելով, նշենք, որ պետք է վերանայվեն պետության գերակայությունները, սահմանվեն նոր առաջնահերթություններ և չափազանց հետևողական քաղաքակա-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

ՀՀ ռազմական ծախսերի շարժընթացն ու կշիռը բյուջեի ընդհանուր ծախսերում, 2011-2021թթ.[11]

նություն պետք է վարվի այդ առաջնահերթություններն օր առաջ կյանքի կոչելու համար: Տարիներ շարունակ խոսվել է ռազմարդյունաբերական համալիր ունենալու, ռոբոտաշինության, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման մասին, սակայն Արցախում տեղի ունեցած պատերազմն ապացուցեց, որ ՀՀ մարտական պատրաստվածությունը համահունչ չի եղել նորօրյա ռազմական աշխարհակարգին: Այսպիսով՝ միտումն ակնհայտ է. ներկայիս սպառազինությանը փոխարինման են գալիս տեխնիկան և տեխնոլոգիան, գերճշգրիտ տեսանկարահանման և խոցման համակարգերը, ինչը նշանակում է, որ մեր ռազմական տեխնիկան ևս պետք է ավելի խելացի (SMART) լինի: Ինչպես Սուն Ցզին է ասել իր «Պատերազմի արվեստը»[12] աշխատությունում. «Ամենալավ հաղթանակն այն է, երբ հակառակորդը հանձնվում է իր կամքով՝ նախքան փաստացի ռազմական գործողությունների մեկնարկը»: Իսկ ինչպե՞ս կարող ենք դա իրագործել. «Պարուրելով մեր թշնամիներին խիտ ու թանձր «պատերազմի մշուշի» մեջ՝ նույնիսկ մարտը սկսելուց առաջ»: Իսկ ինչպե՞ս է դա կատարվում. «Մանիպուլացնելով տարածությունն ու ժամանակը, որպեսզի մեր թշնամիները գիտակցեն, որ յուրաքանչյուր մարտական պլան ի սկզբանե ապարդյուն է»...

[11] ՀՀ պաշտպանության նախարարության ծախսերի տվյալները վերցված են ՀՀ պետական բյուջեի մասին օրենքների հավելվածներից, իսկ 2021 թ. ցուցանիշը՝ բյուջեի նախագծի հավելվածից, https://www.minfin.am/hy/page/petakan_byuj/

[12] Սուն Ցզի, «Պատերազմի արվեստը», https://suntzusaid.com/

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Albert A. Nofi, Recent trends in thinking about warfare, p. 87, 2006, https://www.cna.org/CNA_files/PDF/D0014875.A1.pdf
2. Thomas X. Hammes, 4GW: Our Enemies Play to Their Strengths, Armed Forces Journal, 2004, էջ 40-41. Thomas X. Hammes, The Sling and the Stone: On War in the 21st Century (St. Paul, WI.: Zenith Press, 2004); Thomas X. Hammes, Insurgency: Modern Warfare Evolves into a Fourth Generation, Strategic Forum, 214, 2005, http://www.ndu.edu/inss/strforum/SF214/SF214.pdf

3. Warfare Evolution Blog: Moving toward next-generation warfare, Ray Alderman, 2014, https://militaryembedded.com/radar-ew/signal-processing/warfare-evolution-blog-moving-toward-next-generation-warfare
4. Warfare Evolution Blog: Next generation warfare part 2, Ray Alderman, 2014, https://militaryembedded.com/radar-ew/signal-processing/warfare-evolution-blog-next-generation-warfare-part-2
5. Warfare Evolution Blog: Defeating 3rd generation warfare, Ray Alderman, 2015, https://militaryembedded.com/radar-ew/signal-processing/warfare-evolution-blog-defeating-3rd-generation-warfare
6. Evolution of 4th generation warfare, Ray Alderman, 2015, https://militaryembedded.com/radar-ew/signal-processing/evolution-of-4th-generation-warfare
7. Defining fifth generation warfare, Ray Alderman, 2016, https://militaryembedded.com/unmanned/isr/defining-fifth-generation-warfare
8. Sixth generation warfare: manipulating space and time, Ray Alderman, 2015, https://militaryembedded.com/radar-ew/signal-processing/sixth-generation-warfare-manipulating-space-and-time
9. «ԱԶԳ» օրաթերթ, «6-րդ սերնդի պատերազմներ», 2016, https://www.azg.am/AM/2016042916
10. SIPRI Fact Sheets, TRENDS IN WORLD MILITARY EXPENDITURE, 2019, https://www.sipri.org/sites/default/files/2020-04/fs_2020_04_milex_0.pdf
11. ՀՀ պետական բյուջեի մասին օրենքների հավելվածներ, https://www.minfin.am/hy/page/petakan_byuj/
12. Սուն Ցզի, «Պատերազմի արվեստը», https://suntzusaid.com/

Мери ОВСЕПЯН
Аспирант, АГЭУ

ПАНОРАМА ВОЙНЫ

АРМЕНИЯ НА «СЦЕНЕ» ВОЙНЫ ПЯТОГО ПОКОЛЕНИЯ

Так получилось, что в современном мире переходы от одного поколения войн к другому часто исторически совпадают со значимыми изменениями в развитии человеческого общества, чем и было обусловлено появление принципиально новых средств атаки и новых методов ведения войны. Мировые державы увеличивают военные расходы и оснащают себя современным оружием, готовясь к бесконтактной войне следующего поколения. Изучение особенностей разных поколений войн показало, что известные нам типы тактик войны уже остались в прошлом, и что каждое следующее поколение войн основано на развитии технологий, использовании искусственного интеллекта и дистанционных высокоточных систем атаки. К сожалению, Армения оказалась на арене войны 5-го поколения, не имея необходимой экономической базы, которая позволила бы ей противостоять региональным конфликтам.

Ключевые слова: *поколения войн, новейшие технологии, военный бюджет, бесконтактная война, региональные конфликты*

Meri HOVSEPYAN
PhD student, ASUE

WAR PANORAMA

ARMENIA ON THE "STAGE" OF THE FIFTH GENERATION WAR

In the modern world, the transitions from one generation of wars to another often coincide with the qualitative, historically significant changes in the development of human society, which was the reason for the emergence of fundamentally new means of attack and new methods of warfare. The world's powers are increasing their military spending and equipping themselves with modern weapons in preparation for the next generation of non-contact warfare. The study of the characteristics of different generations of warfare showed that the types of war tactics we know are already in the past and that each next generation of wars is based on the development of technology, the use of artificial intelligence, and remote high-precision wounding systems. Unfortunately, Armenia appeared on the scene of the 5th generation war, lacking the necessary economic base that would allow it to withstand regional conflicts.

Keywords: *generations of warfare, the latest technology, military budget, non-contact war, regional conflicts*